

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուկարիոյ համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Շաբաթի օրը եւայլն զրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՐՆԱ (ՊՈՒԼԿԱՐՈՒ)
Редакция на Вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
եւ չեն զրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին անըզ-
նովին կամ մասամբ:
Ծանուցման տողը 20 սանթիմ. երե-
ֆեմ աւելի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի:

ՍԵՐ ԹԵՐԹԵՐԸ

Կարգ մը հայ թերթերու իրա-
րու հանդէպ բռնած դիրքը եւ ի-
րարու դէմ գործածած լեզուն, որ-
մէ հայհոյութիւն եւ նախատինք
բացատրող բառերու հսկայ հա-
ւաքածոյ մը կրնայ շինուիլ, տը-
խուր, շատ տխուր խոհեր կը ներ-
շնչեն քիչ շատ լուրջ միտքերու:
Ամէն հանրային հաստատու-
թեանց պէս՝ թերթերու առաջին
պարտականութիւնն է՝ օգտակա-
րապէս ծառայել հանրութեան:
Ինչպէս դասագիրքերը դպրոցա-
կաններուն, այնպէս ալ թերթերը
ընդհանրապէս ժողովուրդին առաջ-
նորդներն են, որոնք կը լուսաւո-
րեն զայն, կը ծանօթացնեն զինք
իր իսկական պէտքերուն, ազգա-
յին կեանքի երեւոյթներուն եւ դէպ-
քերուն, կը վարժեցնեն զինք տը-
րամաբանօրէն խորհելու, նշանա-
կիւրի պատահարներու պատճառնե-
րը սերտելու, կեանքը ուսումնա-
սիրելու՝ մէկ խօսքով: Գոնէ այս
պէտք էր ըլլալ մամուլի կոչումը:
Թէ հայ մամուլ իր այս կոչումին
հաւատարիմ չի մնար շատ ան-
գամ, այս դժբաղդաբար անհեր-
քելի իրողութիւն մըն է այսօր:
Ասոր համոզուելու համար, ոչ
հեռուն երթալու պէտք կայ եւ ոչ
մեծ աշխատութեան: Մեր քիչին
տակ, վառնայի մէջ, ամեն օր ի-
րողութիւններ, դէպքեր կը պա-
տահին հայ լրագրական շրջանա-
կին մէջ, որոնք խելահաս մարդե-
րու ցաւ—թեթեւագոյն բառը գոր-
ծածելու համար—միայն կրնան
պատճառել: Առէք մեր մէկ երկու
թերթերու 8-10 թիւերը, ու շաղ-
րութեամբ աչքէ անցուցէք անոնց
պարունակութիւնը, դիտեցէք այն
ոգին, որ գրողներուն առաջնոր-
դած է՝ իրենց խմբագրական գոր-
ծունէութեան մէջ. բաղդատեցէ՛ք
անկողնակալ մտքով ինչ որ անոնք
երկուստեք իրարու դէմ հրապա-
րակ կը նետեն իբր գրչի հօր ար-
տադրոքիւն, արմատական, յար-
ձակողական ուղղութեամբ, որո-
նեցէք ինչ որ թաքուն կայ հոն
չպարտաւած տողերու ներքեւ, տեսէք
անուանարկութիւնները, անար-

գանքները ամենէն տգեղ, զգուշի
բառերով բացատրուած ու անոր
ասոր երեսին նետուած՝ ու անկէ
հալած ըսէք ինչ թէ ա՛յս մամուլն
է սր ժողովուրդին պիտի առաջ-
նորդէ ու անոր բարոյականը պի-
տի բարձրացնէ:
Խեղճ ժողովուրդ. իր ցաւե-
րուն եւ շփոթութեան մէջ պէտք
ունի իր ոգին կազդուրող, բարո-
յականը ուժովցնող, շինիչ յօդ-
ուածներ կարգալու. ու անոնց տեղ
իրեն ջամբուածը ապականող սը-
նունդ մըն է յաճախ՝ անխոստու-
վանելի դիտումներու, անձնական
հակառակութեան, եսականու-
թեան եւ շահագիտութեան ձեռքով
պատրաստուած:
Տարօրինակ բաներ կը տեսնենք
այսօր հրապարակագիրներու շըր-
ջանակին մէջ: Այսօրուան բարե-
կամները, օր մը ետքը անհաշտ
թշնամիներ կը դառնան եւ հակա-
ռակորդները՝ բարեկամ, առանց
հիմնական պատճառի, ճիշդ այն
մարդուն պէս որ շահասէր նպա-
տակով մը ուրիշի մը հետ կը մը-
տերմանայ, կը գտնուի ու կը ջա-
տադովէ զայն, սակայն այն վայր-
կեանին ուր կը տեսնէ թէ չպի-
տի հասնի իր նպատակին, իսկոյն
կը հեռանայ անկէ ու կը դառնայ
իր նախկին մտերմին անողոր ու
խեղիմը:
Եթէ ամենէն հասարակ մահկա-
նացուի մը ներքի չէ այս ընթաց-
քը, ո՛ւր կը մնայ հրապարակա-
գիրներու, հանրային Մենտորնե-
րու, ժողովրդեան հրահանգիչնե-
րուն . . .
Չաղկելը որուն դրօշմը կուգէ
կրել օրուան հրապարակագրու-
թիւնը եւ որով կարգ մը գրողներ
պարծելու հովեր առած են, օգ-
տակար է միայն պայմաններու
տակ ու սահմանի մը մէջ. Այս
կէտը մոռացութեան դատապար-
տուելի է անոնցմէ որոնք կարծես
իրենց սկզբունք ընտրել են զար-
նել, հարուածել, ամբաստանել,
զրպարտել անպայման, ալ ու ձախ,
ամեն կողմ: Ու ասոնք, զիտէ՛ք,
գրական հերոս կը նկատեն ինք-
զինքնին ու կը նկատուին զիրենք
շրջապատողներէն:

Դժհաղդարար դարման մը չպի-
տի գտնուի այս վիճակին մինչեւ
այն օրը ուր ընթերցող հասարա-
կութիւնը վերջապէս ըմբռնելով
իր ճշմարիտ օգուտը եւ թափան-
ցելով իր շուրջը դարձող իրողու-
թեանց խորը, արժանապէս վար-
ձատրէ հանրային շահերու պաշտ-
պանութեան դիմակին ներքեւ ծած-
կուած դիտումներով գրիչ շարժող
ները, ուր որ եւ ով որ ալ ըլլան:
Ե՛րբ պիտի տեսնենք արդեօք
այդ բարեբաստիկ օրը:
Ոչ—Ծայրայեղ մը
վառնա, 19 Յունիս
ՀԱՅ ԿԱՐՕՏԵԱԼՆԵՐԸ
Բ.
Հ. Տըֆուսի չորս նամակներէն
ետքը, էօլր տէ գ'էօզ տ'Օքիանի
մէջ կը գտնենք Պարսկաստանի ա-
ռաքելական պատուիրակին մէկ նա-
մակը եւ կաթողիկ հայոց պատրի-
արք Ս. Աղաբեանի մէկ տեղեկա-
գիրը. առաջինը մեծ շահեկանու-
թիւն մը չընծայեր, իսկ երկրոր-
դը, թէ հեղինակին գիրքին պատ-
ճառով եւ թէ իր պարունակու-
թեամբ կարծէ որ ծանօթացնենք
մեր ընթերցողներուն:
Տեղեկագիրը կըսկսի շնորհակա-
լութիւն յայտնելով Հ. Շարմա-
նի այն նիւթական նպաստնե-
րուն համար, առանց որոնց Ք.
Պատրիարքին հովանաւորած դըպ-
րոցները չպիտի կրնային յարատե-
ւել եւ բարգաւաճիլ: «Հակառակ լու-
սաւորչական եւ բողոքական վար-
ժարաններու, որոնք հետզհետէ ա-
ւելի սպառնալից կերպով կը բազ-
մանան արագապէս»:
Կ. Պօլսոյ եւ փոքր—Ասիոյ ա-
ղէտներուն յաջորդող սոսկալի տագ-
նապը իր սաստկութիւնը կորսնց-
նել սկսելուն պէս՝ «դպրոցական
մրցումը նոր եռանդով մը վերսկը-
սած է պատրիարքական իրաւա-
սութեան ենթարկեալ ամէն տե-
ղեր եւ վերջին դէպքերը կարծես
թէ նոր մղում մը տուին այս շար-
ժումին, որ տակաւ տարածուելու
կը միտի»:
Ս. Աղաբեան մեծ գովեստով կը
յիշատակէ այն ջանքերը զոր լու-

սաւորչականները կրնեն իրենց դըպ-
րոցական գործը առաջ մղելու հա-
մար եւ որոնց յաջողութիւնը շատ
զարմանալի է, նկատի առնելով
այն ամէն անպատշաճ հանգամանք-
ները, որոնք կը շրջապատեն լու-
սաւորչականները: «Կարծես թէ
շահիլ կուզեն այն ժամանակը զոր
խռովութեանց վերջին տարիներու
միջոցին կորսնցուցին եւ մարդ չի
կրնար չի սքանչանալ իրենց խան-
դին ու եռանդին վրայ՝ դպրոցական
գործին մէջ իրենց կորուստները
վերստին ձեռք ձգելու մասին»:
Սակայն իբր մրցակից աւելի
վտանգաւոր են բողոքական միսի-
օնարները, որոնք դպրոցներու հա-
մար շատ աւելի մեծ գուժարներ
ունին իրենց տրամադրութեան
ներքեւ եւ ատկէ զատ, ունին նա-
եւ ազդեցութիւն մը որմէ զուրկ
են լուսաւորչականները:
Բողոքական միսիօնարներու
դպրոցները եւ որբանոցները թէ
նիւթապէս, իբր շէնք՝ եւ թէ բա-
րոյապէս, իբր կրթարան, կը գե-
րազանցեն լուսաւորչական հաստա-
տութիւնները եւ այդ պատճառով
իրենց կը քաշեն լուսաւորչական
որբեր, ինչ որ շատ մտմտուք կը
պատճառէ խելահաս հայերու:
Բողոքականները արդէն շատոնց
ի վեր զօրաւոր կազմակերպութիւն
մը ունենին, որ աւելի զօրացաւ,
ընդարձակեցաւ, երբ Եւրոպայէ եւ
Ամերիկայէ դրամական նպաստներ
հասան հայ կարօտեալներու եւ որ-
բերու համար: Այս պարագաներէն
միսիօնարները օգտուեցան իրենց
կրօնածառալ դիտումներուն ի նը-
պաստ: Ամերիկեան միսիօնարնե-
րու վրայ աւելցան Աստուածաշուն-
չի գերմանական եւ զուիցերիական
ընկերութիւնները: Մէկ խօսքով
գեթախտ երկրին մէջ բողոքակա-
նութեան գործը մեծ յաջողութեան
մէջ է եւ դէպի յաղթանակ կընթա-
նայ ի վնաս կաթողիկ առաքելու-
թեան փրկարար գործին, որ այս-
պէս՝ դժուարին պայքարի մը մէջ
կը գտնուի:
«Քանիցս առիթ ունեցայ, կը-
սէ Ս. Տեղեկաբերը, կրկնելու թէ
դպրոցը մեր առաքելութեան յա-
ռաջդիմութեան եւ բարգաւաճման
գլխաւոր ազդակներէն մէկն է:

Նա չտառեց մի նամակ ուղարկել քահանային, պահանջելով որ ահպաստեալ այս ինչ օրը եւ այս ինչ ժամին՝ քայս այս ինչ խանր, որը Լովչայից մի քանի ժամուկա ծանուպարն է՝ Ստանայով Լեվսկու նամակը ժառնիչ քահանան անտիճապէս այդ նամակը աւարակեց Լովչայի թիւրք գայլագաւին (գաւառապետին), իսկ ինքը գրեց արկուադին թէ որոշեալ ժամին կը լինի որոշեալ տեղում. . . Ընթեցողքը ի հարկէն աղբէր գուշակում է թէ ինչ հետեւեալը պէտք է ունեցած լինի այդ ապ

մեթոյից գործը:

ւոր վրիպակի մը հրատարակու-
թեամբ ուղղեն իրենց յօդուածին
առաջին ֆուտը, ուր կըսեն թէ
«կը պատասպանեմ զիրենք» . մի-
գուցէ կարծուի թէ Շարժումի
խմբագիրները «պատին զարնելով
կը սպաննու» Այդչափ խուժուած
չեմ :

ՍԲՈՂՈՒԱԾ ԽՈՒՍԱՓՈՒՄ

Շարժումի Յարգող խմբագիրները ի-
րենց Յմրդ թերթին մէջ «Սրկու խօսք
եւս» վերնագրին տակ ապարդիւն ճի-
գեր կընեն իրենց փախուստը սքողելու
եւ նորէն կարգ մը խեղաթիւրումներ
կը շարեն, ընթերցողներուն աչքին
փռլի փշելու համար :

Պարոն խմբագիրներ, խնդրեմ, փո-
խանակ ինծի ազնուութեան դասեր
տալու, շատ լաւ կընէիք որ գուցէ ձեր
ազնուութեան գործնական փորձերը
տայիք :

Եթէ վերջին անգամ ձեր խմբա-
գրատունը եկայ, ժամագրութեան մը
գործադրութիւնը չէր այդ, այլ ձեզմէ
ստորագրուած ընդունելու թուղթ մը,
որ յետ երկար բանակցութեանց խմբա-
գրուած եւ երկու վիճակներու ստորագ-
րութեամբ վաւերացած էր եւ զոր դուք
չէիք ուզած յանձնել նոյն պարտնե-
րու ու յայտարարած էիք անոնց թէ
ինձ միայն կրնայիք յանձնել զայն : Ո-
րովհետեւ ժամագրութեան հաշիւը
փակուած էր իմ ու ձեր մէջ, ձեր հը-
րաւէրը կամ պահանջը ինձ հաղորդող
պարտը բաւական գիտարութիւն կը-
րեց զիս համոզելու որ զամ զարձեալ
ձեր մօտ, ձեր ստորագրելիք թուղթը
առնելու : Պ. Թանձիսեանը պատա-
խանաւորութեան եւ ձեզ ալ դա-
տափեաւումէ ազատելու համար անձնա-
սիրական հաշիւներ մէկ կողմ գրի ու ե-
կայ ձեր քով : Զարմանքս—աւելին չը-
սելու համար—մեծ եղաւ երբ տեսայ որ
զուք փոխանակ ձեր հակառակորդին
եւ ձեր երկու բանագնացներուն միջեւ
որոշուած բանաձեւը ստորագրելու, ան-
կէ հիմնովին տարբեր կերպով խմբա-
գրուած թուղթ մը ներկայացուցիք
ինձ, զոր ստորագրելու համար սա
պայմանն ալ առաջարկեցիք որ ձեր
հակառակորդը հրապարակուեալ առնէ,
ինչ որ վերջին անգամ յայտարարած էր
ձեր մասին Իրաւունքի եւ Հայեցի մէջ :

Ձեր այս անգամ ըրածը ձեր նա-
խորդ կատակերգութեանց շարունա-
կութիւնն էր, միայն թէ աւելի մը-
շակուած ձեւի մը տակ. փափաքելի էր
որ ձեր ներկայացումներուն վերջին վա-
րագոյրն ըլլար այս :

Ձեր ընարած բանաձեւը իրաւա-
բանական գպրոցի նոր շրջանաւարտի
մը խակ գղութեան թեմամբ խմբագ-
րուած էր ու բնաւ չէր ծառայեր իր
նպատակին, որ էր Պ. Թանձիսեանի
տեղ ձեզի ենթարկել պատասխանա-
տուութեան : Ինձի ուրիշ բան չէր մը-
նալ ընել, եթէ ոչ առնել ձեր բանաձե-
ւին պատճէնը, ձեզի յայտնել որ եթէ
երբեք, ըստ ձեր բացատրութեան իմ
երախայական վարմունքս պատճառ
առեւր է թիւրիմացութեան մը, իմ
պարտքս էր աւելին աւելնով զայն
զարմանել, եւ ապա մեկնիլ : Ձեզմէ
բաժնուելէ ետքը իմ վարմունքիս բա-
ցառութիւնը տուի հրապարակու, ո-
րուն ի պատասխան ինծի համար «քէն
ըրեւր ու գաղթեւր է» ըսելու յափ քաջ
եւ աղնի գոնուեցաք :

Պարոններ, երբեք չի խորհեցա՞ք որ
ինձմէ եւ ձեզմէ զատ երեք ուշադիր

օւնկնդիրներ կային հոն : Եթէ խնդիր
մը այս աստիճան խեղաթիւրուէն ազ-
նուութիւն կըսեն, եթէ ամենապարզ
եղելութիւն մը ճշմարտութեան հակա-
ռակ կերպով պատմելուն քաղաքավա-
րութիւն կըսեն, այդ ինձի անձանթ
գպրոցի մը վարդապետութիւնը ըլլա-
լու է եւ ներքեցէք որ ես ալ այս յա-
ռաջացած տարիքիս ձեր այդ գպրոցին
չաշակերտիմ :

Դուք գիտէիք որ այդ օրը ես ձեզի
հետ բանակցելու չեկայ եւ թէ իրա-
ւունք ալ չունէի բանակցելու, քանի
որ ձեր եւ ձեր հակառակորդի միջեւ
նախապէս գծուած եւ ձեր երկու բա-
նագնացներէն ստորագրուած թուղթ
մը կար արդէն մէջտեղ : Ձեր բանա-
ձեւի պատճէնը առի տարի զիս ձեզի
զրկողին, իրեն հասկցնելու համար որ
զուք իրապէս ձեր Պ. Թանձիսեանի
չուայլած խոստումներուն դասալիքն
էք, եւ ձեր հակառակորդին հետ դա-
տարանի մէջ զէմ առ զէմ ելլելէ փոթ-
եառնող փախուստականներ :

Հաճե՛ք զիս արտօնել (ծիծաղելի
արտօնութիւն) որ հրատարակութեան
տամ ձեր բանաձեւը, աղէկ գիտցէք որ
այդ տեսակ խաղերու չեմ գար, մինչեւ
իսկ եթէ ուրիշն է որ պիտի վտան-
գուի Լսածս կըմբռնէք, այնպէս չէ՞,
թէեւ քիչ մը դժուարամար ըլլայ ձե-
զի համար : Ես ալ կատաղարկեմ որ
զո՛ւք զայն հրապարակէք, այդ ոչ մի-
այն ձեր իրաւունքն է, այլ եւ ձեր
չանին պահանջը, որովհետեւ հանրու-
թիւնը պիտի տեսնէ որ ձեր բանաձե-
ւը արդէն է, ձեր խոստումներուն
իրագործումն է, եւ զձեզ ուղղակի
ձեր հակառակորդին դէմ կը հանէ (․․․)
դատարանին առջեւ :

Առաջարկս, կարծեմ, բանաւոր է.
բայց ձեր երկիւղը եւ սոսկումը ուր
գնենք :

Պ. Թանձիսեանի ունէ գղթումն վե-
րագրել անտեղի է, իր հերքումները
ձեր գրածին հակառակը կը հաստատեն :

Եթէ այս գործին մէջ գղջացողները
երեւան բերել ուզենք, անոնցմէ ա-
ռաջինը ես եմ որ ձեր շուայլած հաւաս-
տիքներէն խաղաղեմ : Պ. Թանձիսեանը
վտանգեցի յորդորելով որ ձեր թերթին
պատասխանատուն ըլլայ : Ներման ան-
արժան գղջացող մ'ալ դուք էք, որ
յեր հակառակորդին դէմ գրեցիք ձեր
ծանթ յօդուածը, ըսածիս ապացոյց՝
ձեր դատաւարութիւնը եւ ձեր փախուս-
տի մանուկները :

Համոզուած եմ որ գիացած ճշմար-
տութիւններէս մէկ հատն իսկ ձեր ե-
րեսնիվեր ըսելս «հրապարակին վրայ տի-
րող անկրթութիւններէն» պիտի նկա-
տէք (ձեզի աննպատակ ըլլալուն համար).
բայց հոգս չէ. ես նախապէս խոստովանե-
ցայ որ չեմ կրնար աշակերտել ազնու-
ութեան եւ քաղաքավարութեան այն
գպրոցին, որուն դուք կը պատկանէք :

Նկարագրիս կարծեցեալ փոփոխու-
թեան գաղով, ձեր այդ հայեացքը կը
նկատեմ իբր 1. Վարձք այն դոյզն ծա-
ռայութիւններուն զորս մատուցած եմ
ձեր թերթին. 2րդ. կատարեալ գոհա-
ցում իմ այն անկեղծ բարեկամներուս
եւ պատուաւոր ծանօթներուս որոնք
Շարժումի Դ. թիւը երեւալէն յետոյ
իսկ եկան ինձ բացատրեցին գործած
սխալս. 3րդ. ձեր հասկացողութեան
կշիռը եւ կրթութեան չափը :

Յ. Յ. ԹՕՓԱԼԵՆՑ

«ԻՐԱՆԻՆԻՔ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ունկնդիր, Ս. Ձեռք կարող հը-
րատարակել. քաջաջուր է գրուածը :
Տրդատ, Միաց. Նաւ. Հրատա-
րակութեան անյարմար. շատ ան-
գամ յեղյեղուած բաներու կրկ-
նութիւնն է, քանի մը տողէ զատ :

ԼՐԱՔԱՂ

Արմենի կը գրեն Կ. Պօլսէն.

Տրդատ պէ՛յ Տատեան, որ աւելինը-
բամիս է քան Տիրան պէյ, հիմայ Ժէ-
նէվ կը գտնուի խաղաղութեան մասին
բանակցելու համար Դոքսակեաններուն
հետ :

Գէորգ էֆ. Պիւլպիւլեան կը շարու-
նակէ Բարիդի մէջ բանակցիլ Մարտ-
եաններու հետ եւ իր ջանքերուն ա-
ջակց է Թուրքիոյ դեսպանը :

Տիրան էֆ. Քէլէկեան Իգմիրեան
Պատրիարքին նախկին քարտուղար եւ
քանի մը ամիսէ ի վեր հաշուակալ
Սուլթանի անձնական դանձին նախա-
րարութեան, Բարիդ գնաց իբրեւ մաս-
նաւոր թղթակից Սապահի որուն տը-
նօրէնը իր ազգականն է : Ոմանք կը
կը կարծեն թէ իրեն պաշտօն յանձ-
նուած է բանակցիլ Միջլիկեթի խմբ-
ագրութեան հետ. սակայն լաւատեղ-
եակ շրջանակներու մէջ սա համոզու-
մը կայ թէ Ասմէտ Բիգա պէյ, որ ար-
դէն մերժեց երեւոտական նախարա-
րութեան պաշտօնը, անկաշառ պիտի
մնայ մինչեւ վերջը : Ուրիշներ ալ կը
կարծեն որ Պաշտօնէ պաշտօն առած է
ձեզի համոզելու որ գաղթեցնէք Արմե-
նիի հրատարակութիւնը եւ վերագո-
նաք Կ. Պօլս, ուր Սուլթանը կը
խոստանայ ձեզի բարձր պաշտօններու
կոչել : Անոնք որ գիտեն ձեր ազգային
ասպարէզը երեսուն տարիէ ի վեր, կը
խնդան թուրքերուն այս անտուութեան
վրայ :

Հայ շրջանակներու մէջ կը խորհուի
որ Դուռ Գարուի Պատրիարքարանէն
զրկուած պաշտօնական պատգամաւո-
րութիւն մը միայն կրնայ օգտակարա-
պէս բանակցիլ Եւրոպայի մէջ աշխա-
տող հայ հայրենասէրներու հետ : Թուրք
պատուիրակներու նկատմամբ անվրս-
տահութիւնը սկիզբն է հայկական ի-
մաստութեան :

Մուրատ պէյ որ Կ. Պօլս վերա-
դարձաւ Սուլթանին այն խոստումին
վրայ թէ պիտի բարենորոգէ իր վար-
չութիւնը, մինչեւ հիմայ մերժեց թո-
շակը, զոր Սուլթանը կուզէր իրեն
յատկացնել : Ինք բաւական հարուստ
է արդէն :

—Արմենի կը յանձնարարէ զգուշա-
նալ Պէտրիանդատէ Օսման բաշայէն
որուն Կ. Պօլսէն Ռուսիա երթալը հե-
ռագիրները ծանուցին : Միւսս Զե-
րագի համոզումն է որ Օսման բաշա
թուրք կառավարութեան հաւանու-
թեամբ եւ գաղտնի հրահանգներով ձեռ-
նարկած է այդ ճամբորդութեան եւ
«Հայերուն ու Ռուսերուն պիտի խոս-
տանայ Գիւրտերու աջակցութիւնը»
թուրքերուն դէմ. առով պիտի ջանայ
թափանցել Մոսկովեան յաղաքակա-
նութեան խորհուրդներուն Ասիական
Թուրքիոյ մասին, եւ գաղափար մը կաղ-
մել նշանաւոր հայերու գիտումներուն
վրայ իրենց պատմական հայրենիքին
նկատմամբ :

Նոյն թերթին մէջ կը կարդանք
թէ Պօլսէն իտալացի լրտեսներ
զրկուել են Կիլիկիա. ասոնք ինք-
զինքնին այնտեղի հայերուն ներ-
կայացուցել են իբր կալիպալտեան.
ներ, որոնք պատրաստ են իրենց
արիւնը թափել ազատութեան սի-
րոյն համար եւ որոնք հազարաւոր
զինակից ընկերներ ունին միեւ-
նոյն անձնագոհողութեան ոգով
տոգորուած ու թուրքերուն դէմ
կռուելու ծարաւի : Միայն թէ
այս կեղծ կարիպալտեաններ կու-
զեն ճանչնալ այն հայերը ո

րոնք կը փափաքին իրենց գոր-
ծակցիլ : Պարզամիտ հայեր մատ-
նանիշ կընեն իրենց այն հայրենա-
կիցները որոնք ազգեցիկ դերք մ-
ունին երկրին մէջ եւ զորս քիչ յեւ-
տոյ ոստիկանութիւնը կը նետէ Կի-
լիկիոյ բանտերուն մէջ :

—Նոր-Դար կը գրէ թէ հայ
գաղթականները ահագին խմբերով
Բագուէ, Թիֆլիսէ եւ Կովկասի
ուրիշ քաղաքներէն իգտորի ճամ-
բով կանցնին Թուրքիա : Թիֆլի-
սի ոստիկանապետը դարձեալ հրա-
հանգ տուել է իր ստորագրաւա-
ններուն՝ իրեն շուտով ներկայաց-
նելու քաղաքին մէջ ապրող հայ
թրքահայատակներուն ցանկը :

—Թիֆլիսի մանչերուն 2րդ. դա-
սական կիմնադրան այս տարի ա-
ւարտող 36 աշակերտներէն 9 հայ
են. իսկ աղկանց 3րդ. կիմնադ-
եան աւարտող 16 աշակերտուհի-
ներուն կէսը հայուհիներ են :

—Թիֆլիսէն կը գրեն թէ կա-
ռավարական որոշումով Արմազան-
քի իսպառ խափանումը ընդհանուր
եւ մեծ ցաւ պատճառած է հայ հա-
սարակութեան մեծամասնութեան :
Եթէ Կովկասի կառավարչապե-
տին որոշումին համաձայն, ութ
ամիս դադրելէ ետքը, Արմազանք
չը գաւազարտուէր մշտնջենական
դադարումի՝ իր բաժանորդներու
թիւը պիտի եռապատուէր :

—Խաչատուր Արուսեանի 50 ա-
մեայ տարեդարձը որ վերջերս կա-
տարուեցաւ Թիֆլիսի մէջ, սա տո-
ղերը կը ներշնչէ Հանդէս Ամսօր-
եայի. «Արուսեանի գրաւիչ զգա-
ծութիւնը տաք պիտի պահեն միշտ
իր յիշատակը ներկայ եւ յաջորդ
սերնդեան մէջ, միայն թէ «զգած-
ուիլ» գիտնանք . . . : Այսօր Ա-
րուսեան, վաղը Պարոնեան, եւ սա-
կայն պարզ սքանչացման սահման-
ներէն անդին չանցնիր մեր յար-
գանքը, երբ ասոնց այրիներն ու
որբերը թերեւս աւելի բան պա-
հանին ժամանակակից հայերէն :»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիսապաշտօնական Նօվոկ վրե-
միա կը շատագուցէ Ռուսիոյ եւ
Ֆրանսայի միջեւ միաձայն որո-
շում մը՝ վճռական գործունէու-
թիւն մը սկսելու Գերմանիոյ դիտա-
ւորութեանց դէմ փոքր Ասիոյ նը-
կատմամբ եւ այն գաղտնի համա-
ձայնութեան դէմ որ կայացած է
Գերմանիոյ, Վատիկանի եւ Թուր-
քիոյ միջեւ, որոնց գիտումները
միասակար են ֆրանսական եւ ուս-
սական շահերուն Արեւելքի մէջ :

—Ճամբորդութեանց սիրահար
Վիլհէլմ կայսրը Հոնկէնցօլէրն շոգե-
նաւով մեկնել է դէպի Նորվեգիա :

—Իտալիոյ նոր նախարարու-
թիւնը կուզէ իր հետեւելիք խիստ
ընթացքը ամէնէն առաջ զգալի ընել
տալ Երեսփոխանական Ժողովին
տաքգլուխ անդամներուն : Զօրա-
պետ Բէլու ստիպողապէս կը պա-
հանէ Ժողովէն որ արտօնէ կա-
ռավարութիւնը ձերբակալել եւ
գաղտնի ենթարկել այն ընկերվա-
րական երեսփոխանները, որոնք
կամբաստանուին թէ վերջին խը-
ռովութեանց մասնակցած են ուղ-
ղակի կամ անուղղակի կերպով :
Նախարարութիւնը կը սպառնայ
հրաժարել, եթէ Ժողովը մերժէ
խնդրուած արտօնութիւնը :

Մ ՈՒ ՀԱՐԵՊԵ

Սպանիան ինչպե՞ս պէտք է իւր-
տի օլան ամիրալ Սէրվերա տօ-
նանմասը, պիր սէֆինէտէն մա-
տա, Սանթիակո Էօնիւնտէ բա-
րաբարչա օլմուշ վէ հանմը, ամի-
րալ Սամբուս Սանթիակո քէօրֆէ-
զինի դապիթ իթմիշ, վէ 1300 նէֆէր
Սպանիալը ասքէրի հէսիր թութ-
մուշ տըր: Խաֆիֆ սուրէթտէ եա-
րալանմը օլան ամիրալ Սէրվերա
տախի հէսիրէր տախիլինտէ տիր:
Ամերիգալար շու մուվաֆֆա-
զըյէթտէն տալար թապիի պէօ-
յիւք սէվինճ տուլմագտա վէ ա-
թըք Սպանիալարըն գապկայա
տէվամ իտէմէյէճէքէրինի իւմիւտ
իթմէքտէ իսէյէր տէ, Սպանիա վիւ-
քէլա րէյիսի Մ. Սակասթա Գու-
պատա 100000 սպանիա ասքէրի
պուլունտըղըն վէ պինաէնալէյ
Սպանիանըն տաշա մաղուպ օլ-
մատըղըն պէյան իթմիշ տիր:
Գարատա տախի Ամերիգալար
կիւնտէն կիւնէ իլէրու կիթմէքտէ
տիրէր: Ս. Ժուան, Էլ Կանէ վէ
սայիր մաշալէր ալընտըգտան վէ
տիւշմէն սէֆինէլէրի քիւլիյէն
մաշվ օլտուգտան սօնրա, Ժէնէ-
րալ Շաֆթէր Սանթիակոնըն թէս-
լիւ օլմասըն տիւշմանտան թա-
լէպ էլլէտի: Սպանիալար պու-
թէքիթի րէտտ իթտիլէր: Ինկի-
լիզ գօնաօլսը թէվաստութը իլէ
Ժէնէրալ Շաֆթէր շէհիրտէն տը-
շարը չըգապիլմէք իչին էհա-
լիյէ իքի կիւն միւսաատէ վէրտի:
Միւսաատէ միւտտէթի խիթամ
պուլտուղը կիպի, Ամերիգալար
կէրէք տէնիպտէն վէ կէրէք գա-
րատան Սանթիակոյը թօքա թու-
թաճաղար տըր:
Սպանիալարըն գահրամանճա
գապկա իթտիլէրինի վէ քեաֆի
մըգտար ասքէր վէ լէվադիմաթը
հարպիյէլէրի պուլունտալըն սէ-
պէպլէ մաղուպ օլտուգլարըն Ա-
մերիգալար ասխի թաստիգ ի-
տէյօրլար:
Էրզազ պուլմագ միւշքիւլաթը,
Սպանիալարըն շէճաաթը վէ
թութտուգլարը մէվգըլարըն ֆէվ-
գէլատէ մէթանէթի սէպէպիլլէ,
Ամերիգա ասքէրինին միւշքիլ հալ-
տէ օլտուղըն պիղղաթ Ժէնէնալ
Շաֆթէր Ուաշինկիթօն հարպիյէ
նէգարէթինէ պիլտիրմիշ վէ հէնի-
տէն հարտըմ իլէ ասքէր իչին
հէյինթի թալէպ իթմիշ, վէ Ու-
աշինկիթօնտա տէրագապ շու մաթ-
լուպըն իճրասընա միւպաշէրէթ օ-
լունմը տըր:
Հալանըն ֆէվգէլատէ սըճաղը-
ղընտան Ամերիգա ասքէրինտէ
հասթալըք չօղալմագտա տըր:
Շաֆթէր հօւկուլըգտան քէյֆ-
սիլ օլմուշ, Ժէնէնալ վէլէր վէ
Ժէնէնալ Լինալէս իսէ գապկատա
հարալանմըլար տըր:
Ֆիլիբին ատալարընտա տախի
Ամերիգալար հէնի պիր մուաֆ-
ֆադիյէթէ նայիլ օլտուլար: Ուա-

շինկիթօնտան հարտըմ կէճոնտէ-
րիլէն ասքէրին պիր գըսըր Գա-
վիթէյէ հէթէշմիշ վէ գարայա
չըգմը տըր: Եօլտա իգէն Սմէ-
րիգալար Սպանիա հիւքմիւալ-
թընտա պուլընան Լարօն ատապը-
նը գապիթ իթմիշլէր վէ օրատա
քեաֆի մըգտար ասքէր պրագ-
տըգտան սօնրա մաշալի հէօքիւ-
մէթ մէմուլարըն պաշըճալարըն
հէսիր մագալմընտա թութուպ պէ-
րապէր Գալիթէյէ կէթիլմիշլէր
տիր:
Ամիրալ Գամարսըն Բօւթ Սա-
խտէն կէշմիշ օլտուղըն պիլտիր-
միշ իտիք: Ամիրալ Սէրվարօյա
հարտըմ հէթիշմէք իչին Սպա-
նիատան հօլա չըգմը օլան Գա-
մարա տօնանմասըն հէրնէ սէ-
պէպլէ մէպին իսէ հէնիտէն Բօւթ
Սայիտ լիմանընա կէրի տէճոնէկէ
մէճպուր օլտուղըն թէլէկրաֆլար
պիլտիրիօրլար: Խապէթ ամի-
րալ Սէրվարօ տօնանմասը բարա-
բարչա օլտուգտան սօնրա, Գա-
մարանըն հօլըլըղը պիհոտէյէ
կիտէճէք իտի:
Րիվայէթէ կէօրէ՝ Ամերիգա հէօ-
քիւմէթի Սպանիա սէվաշիլինի
թօքա թութմագ իչին տէրագապ
պիր գաշ զըրհլըլար կէճոնտէրմէկէ
գաթիլէն գարար վէրմիշ տիր:
Խուլասաի քէյաթ, Սպանիա պուլն-
տան պէօյլէ քիւլիլէն մաղուպ օլ-
մուշ ատտ օլընապիլի:
Սօն հալատիլէրէ կէօրէ՝ ա-
միրալ սէրվարօ թըքըլմը օլտու-
ղը քէօրֆէլտէ գալըպ տիւշմանա
նիհայէթ թէսլիւ օլմաղա մէճպուր
օլաճաք հէրտէ, ճէնկլէշէրէք մաշվ
օլմայը թէրճիհ իտէրէք, քէօր-
ֆէլտէն տշարը տիւշմանա գար-
չը չըգմաղա գարար վէրմիշ վէ
շու թէշէպիլսիւնտէ թապիի
մաղուպ օլմուշ տըր: Պէտպիլթ
ամիրալ պուլընտըղը ոէֆինէ հան-
մաղա պաշալտըգտան սօնրա տա-
խի սիւաշ էլլինտէ տաշա ճէնկլէ-
մէքտէ իքէն հէսիր թութուլմը
վէ շու շէճաաթը իլէ տիւշմէնին
հայրէթինի մուճիպ օլմուշ տըր:
Միթիլէնէվ վիլէ
Իթալիա, Ֆրանսա, Ինկիլիշէրա
վէ Րուսիա պէյինտէ վէրիլէն
գարար մուճիպինճէ, Կիրիտին
տախիլի ասայիշին մուհաֆազաթը
մէճիլսը ումուլի թարաֆընտան
ինթիլապ օլմուշ վէ ամիրալա-
րըն նէգարէթի թաշթընտա իյ-
ֆաի խըղմէթ իտէճէք պիր հէյէ-
թը մախսուէյէ իհալէ օլընաճադ
տըր: Ամիրալարըն իգթիլլաի հալ-
տէ մէքըլիւ հէյէթի աղը վէ գապ-
թիյէ իտարէսինի թէշքիլ իթմէկէ
հագղարը օլաճադ տըր: Սէֆի-
լէր պու գարարըն Պապը Ալիյէ
թէպիլիլ իթմիշլէր տիր:
Րուսիատա պուլընան էրմէնի
մուհաճիլլէրին թիւրքիլայա ալ-

տէթ իթմէլէրի հագղընտա Ռու-
սիանըն մալիւ օլան թալէպիլի
սէֆիլ Մ. Ջինօվիէֆ պու տէֆ
թէքրարէն Պապը Ալիյէ իլէլքիւ
էյլէմիշ տիր:
Նայէ Ֆրայէ Բիւնէնին ալ-
տըղը պիր մալիւմալմա նաղարէն
պիր էրմէնի գօմիթէսի թարա-
ֆընտան հագղընտա թէքրարէն
պիր նիւմայիշ վուգու պուլաճա-
ղընտա տայիր Սթանպօլտա պիր
շայէա գուհուր իթմիշ տիր:
Էրմէնի գըրկընալըն էնա-
սընտա կէրէք Սթանպօլտա վէ կէ-
րէք վիլայէթլէրտէ էնէպիլ թա-
պալարըն տիւշար օլտուղը գարար
ու գիւնըն թաղմիլի Պապը Ալի
թարաֆընտան գապուլ օլունաճադ
իսէ տէ, գարար ու գիւնլար պիր
գօմիսիօնը հէտի իլէ թաշգիլ օլ-
տուգտան սօնրա իճապիտէն մէպ-
լաղարըն թէշէտիյէ օլաճաղըն էվ-
րօքա կապէթալարը պիլտիրիօր-
լար:
Թիւրք իտարէսի վէ մէմու-
լարը հագղընտա Եթմէն հէրի է-
հայիսի իթիւրալթընըն թաշթը
նաղարա ալընաճաղընա վէ իյճա-
պընըն իճրա իսիլէճէկիլնէ տայիր
Եթմէն հէնի վալիսի ասըլարըն
սէրքէրտէսի օլան շէյիս Համիտէ
վատ էյլէմիշ տիր:
Պահրիյէ նաղըրը Հասան բա-
շա մէմուրիյէթինտէն իսթիֆա
իթմիշ իսէտէ, Սուլթան իսթի-
ֆասընը գապուլ իթմէմիշ տիր:
ՏԱԽԻԼԻՅԷ
Բրէնս վէ բրէնսէս հաղարաթը
բէնճէմպէ կիւնը Ռուսուգ թա-
րիգի իլէ Սինայայա աղիմէթ իթ-
միշլէր տիր:
Վիտին լիմանը ինչասը յու-
լիս 14տէ Սօֆիա բօսթայանա բօ-
միսիա սալօնընտա մէղաթա գօ-
նուլաճագ տըր: Ինչա մէսարիֆա-
թը թաշմինէն 554 պին լէվէ պա-
լիլ օլաճաք վէ տէրօհտէ իթմէյէ
արղուքէշ օլանլար 27 պին ալթըն
լէվ տէրօղիթօ մագալմընտա միւ-
գայիտէ գօմիսիօնընա թէսլիւ իթ-
մէյէ մէճպուր տըրլար:
Սօֆիա շէհրինի էլէգթիք
ընըղըլա թէնվիր իթմէք թէշէպ-
պիւսը միւնագասայա գօնուլմուշ
տըր:
Րուսիայա հիճրէթ իթմիշ օլան
Պուլկար օֆէյցըլէրտէն Կ. Տիքօֆ
տախի Պուլկարիլայա ալտէթ իթմիշ
վէ հարպիյէ նէգարէթի թարա-
ֆընտան լիյագաթ վէ բիւթպէսի-
նէ միւնասիպ պիր մէմուրիյէթէ
թային գըլընմը տըր:
Հասքէյ գաղասընտա Մա-
րիցա հագղընտա պիր քէօմիւր
մատէնի պուլմուշ օլան Կ. Նիգօ-
լա վասիլէֆ մատէնի իչլէթմէք
իչին իգթիլլա իտէն մէճպուրիյէ-
թի ալիլ իթմէք զընընտա Սօֆի-
այա միւրաճաաթ իթմիշ տիր:

ԱՐՄԵՆԱԿ Ս. ՎԱՌՆԱԼԵԱՆ
Մասնագէտ-ուսուցիչ ձեռագիտարանի
Պատիւ տնի ծանուցանիլ Ար-
զայ հասարակաթեան իլէ պատ-
րաստ է գասեր տալ իգական սե-
ւի յատուկ ձեռագիտարանի եւ
իրեն աշակերտողներուն սորվեցը-
նել առանց փորձի (բուօվա) հա-
գուստ պատրաստել նուրը ճաշա-
կով: Փախագողները պարտին դի-
մել իրեն, 5րդ. թաղ. Րիչսըս փո-
ղոց, թիւ 334, անձամբ կամ քար-
թով մը: 2—5
ԿՈՐՍՈՒՄԾ
Վահան Գաղանճեան անուն 15
տարեկան Մարդուանցի պատանին
Ռուսուգի Գլուխեան ֆոյրերուն
հաստատութենէն անցեալ տարի
օգոստոսի մէջ հեռացած է և անկէ
ի վեր երեւան չէ ելած: Ով որ իր
մասին տեղեկութիւն ունի, թող
հաճի գրել Տիար Մելքոն Գաղան-
ճեանի, Վառնա, Պալթաճըլար
չարը, թիւ 149:
ՏՊԱՐԱՆ
ՊԱՌՈՒՆԵՐ ԼՐԱՊՐՈՅ
Լրագրիս վերջին երեսի սիւ-
նակներուն մէջ օտար լեզուներով
ալ աղբեր կը գետեղուին: Ա-
ռանձին կը սպագորուին գրքեր,
տեսարաններ ու կը պատրաստուին
հայերէն, պուլկարերէն, ֆրան-
սերէն եւ յունարեն լեզուներով
ընկալագրեր, հասցէներ, հար-
սանեաց եւ այլ հրատարակութեան
այցաքարտ եւ այլն:
ԳՆԵՐ ՁԱՓԱՒՈՐ
Փախագողը պարտին դիմել խըմ-
բագրութեան հասցէին:
ՊԱՏՄՈՒԹԻԻՆ
ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ
Ի ՀՆԴԿԱՍՏԱՆ
Հնդկաստանի հայ գաղութի
մասին պատմական եւ աղագրա-
կան խիստ շահեկան տեղեկու-
թիւններ պարունակող սոյն անգ-
լիերէն երկասիրութիւնը, զոր հե-
ղինակը, Տիար Միսրովպ Սէթ-
եանց՝ կալիթաթայէն զրկած է մեզ,
կարծէ որ ամէն անգլիագէտ աղ-
գայիններու թանգարանին մէջ
գտնուի:
Գինն է 6 լէվ
Կեդրոնատեղի վառնա
Ա. Չարպիլանէյեան
«Հայկական Գրատուն»
«ԱՐԵՎԵԼԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ»
Նոր քաղաք
Ռ Ո Ւ Ս Ճ Ո Ւ Ք
Սիմիօնֆի դրամատան դէմ
գանդուղ նախկին «Մասիս» շէն-
քին մէջ, ուր կը պատրաստուին
տան խահանջի յատուկ մաքու-
թեամբ համազամ կերակուրներ
եւ անուշեղեններ չափաւոր գինե-
րով: Փորձելը ստուգել է:
Բաժանորդագրութիւն կ'ընդուն-
ուի դիւրամատչելի պայմաններով:
Ա.ՉԴ
Իրաւունք կը ծախուի Ռուս-
ուգ, բօստայի նախկին շէնքի
գիւմաղ, Տիար Մ. Թիւրիւնեան
նի խանութը: